

23.12.15թ.

Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 4/04 կանոնակարգի 66 և 67-րդ կետերի՝

«ՇԵՆ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲԸ-ի պարտատոմսերի հրապարակային առաջարկի մասին

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2015 թվականի դեկտեմբերի 21-ին ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի թիվ 1/985Ա որոշմամբ գրանցվել է «Շեն-Հոլդինգ» ՓԲԸ-ի 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 60 ամիս շրջանառության ժամկետով, տարեկան 11% եկամտաբերությամբ, 50000 հատ և 10000 ՀՀ դրամ անվանական արժեքով, 60 ամիս շրջանառության ժամկետով, տարեկան 17.5% եկամտաբերությամբ, 25000 հատ անվանական արժեկտրոնային պարտատոմսերի ազդագիրը, որը հրապարակվել է Թողարկողի (www.shenholding.com) ինտերնետային կայքում և 2015թ-ի դեկտեմբերի 23-ի Առավոտ օրաթերթում:

Ազդագրի թղթային տարբերակը կարելի ձեռք բերել նաև Թողարկողից (հասցեն ք.Երևան, Շիրակի 2/2):

Ազդագրով նախատեսված արժեթղթերի տեղաբաշխումը սկսվում է 28.12.2015թ.-ին և ավարտվում է 17.02.2016թ.-ին:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱԿ

« 21 » 12 2015թ.
Երևան

Թիվ 1/985Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«ՇԵՆ ՀՈԼԴԻՆԳ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԱԶԴԱԳԻՐԸ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Շեն հոլդինգ» ՓԲԸ-ն 2015 թվականի դեկտեմբերի 14-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ է ներկայացրել.

- 50.000 հատ, 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 5 տարի շրջանառելիության ժամկետով, 11% արժեկտրոնի տարեկան անվանական տոկոսադրույքով, արժեկտրոնի կիսամյակային վճարմամբ, և
- 25.000 հատ, 10.000 ՀՀ դրամ անվանական արժեքով, 5 տարի շրջանառելիության ժամկետով, 17,5% արժեկտրոնի տարեկան անվանական տոկոսադրույքով, արժեկտրոնի կիսամյակային վճարմամբ արժեկտրոնային պարտատոմսերի ազդագրի գրանցման հայտ, ինչպես նաև համապատասխան ազդագիրը և «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով ազդագրի գրանցման համար պահանջվող բոլոր փաստաթղթերը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածը և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի եզրակացությունը (2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 57 արձանագրություն)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Գրանցել «Շեն հոլդինգ» ՓԲԸ-ի կողմից 2015 թվականի դեկտեմբերի 14-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ է ներկայացված.
 - 50.000 հատ, 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 5 տարի շրջանառելիության ժամկետով, 11% արժեկտրոնի տարեկան անվանական

Handwritten signature and stamp

տոկոսադրույքով, արժեկտրոնի կիսամյակային վճարմամբ, և

- 25.000 հատ, 10.000 ՀՀ դրամ անվանական արժեքով, 5 տարի շրջանառելիության ժամկետով, 17,5% արժեկտրոնի տարեկան անվանական տոկոսադրույքով, արժեկտրոնի կիսամյակային վճարմամբ արժեկտրոնային պարտատոմսերի ազդագիրը:
- 2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:



ԱՐՏՈՒՐ ԶԱՎԱԴՅԱՆ

Իսկապես մեր հիշյալ 5
ՀՀ կենտրոնացված անվանական
արժեկտրոնային արժեպատեթիկ
անվանական արժեկտրոնային
բանկի արժեպատեթիկ
2015 թ. 10. 10. 15